

Մատուցի նմա զծառայութիւն իմ, որպէս պարտն էր ինձ. միայնակ 'ի գլուխ գնդի միոյ փոքու տղատորդւոց համագգեաց՝ պաշտպանեցի նմա մինչև 'ի սպառ ընդդէմ երկոց հզօր պետութեանց, որ գային տիրել նմա. և յորժամ ընկճեալ յառաւելութենէ թշնամեաց առ պարսպօր Վարսաւիոյ, 'ի տեսիլ մայրաքաղաքին մեծի մատնելոյ 'ի հուր և յաւար՝ հարկ եղև զպարտութիւն յանձն առնուլ և մտանել ընդ լծով բռնաւորութեան, տակաւին 'ի սրտէ գդէմ ունէի: Կորակոր խոնարհեալ, զի կայի յաշխարհին իմում՝ որ ոչ ևս էր իմ: Խնդրէի զէնս ամենայն ուրեք, ամենայն ուրեք նիզակակիցս՝ առ 'ի դարձուցանել 'ի նա զպաշտութիւն իւր և զանուն: Այլ ընդունայն ճիգն, զուր վաստակ. օրըստօրէ պնդէին չղթայք, և ձեռք իմ տկարք չկարէին զայնոսիկ խորտակել: Անդաստանք հարցն իմոց էին 'ի բաժնի աշխարհին, որ նուաճեալ էր ընդ ձեռամբ Ռուսաց. անդ կէի ընդ Փեղորայ բարեբաստիկ, եթէ լուծ օտար չծանրանայր զինև: Բողոք՝ զոր չկարէի հեղձուցանել յիս, և մանաւանդ խրոնել տժգոհ որերոյ առ իս, տազնապեցուցին զինքնակալն կասկածոտ. և 'ի միում աւուրց ընդ առաւօտն յափշտակեալ 'ի տանէ և 'ի գրկաց մօր քո և 'ի քէն, դատրիկ իմ, մինչ դեռ ևս էիր քառամեայ, և ոչ արտասուէիր՝ բայց 'ի տեսիլ արտասուաց մօր քո, ածայ 'ի բանտ 'ի Պետրոպօլիս: Զհետ իմ եկն Փեղորայ, զմիայն շնորհ կարացեալ ընդունել լինելոյ ընդ իս բանտարգել. աւելի քան զամ մի եղաք 'ի սոսկալի բանտին, զրկեալ յօդոց, գրեթէ և 'ի լուսոյ, այլ ոչ 'ի յուսոյ: Զկարէի հաւատալ՝ զի ինքնակալ արդար չարսացէ անպարտ զառն քաղաքացւոյ պաշտպանել իրաւանց աշխարհին իւրոյ, և չվստահասցի 'ի խոստումն՝ զոր տայի կալոյ նմա հպատակ: Կարի յոյժ բարիս խորհէի զմարդկանէ. դատապարտեցայ առանց լսելի լինելոյ, և սրսորեցայ ցկեանս 'ի Սիպերիա: Նժգեհակից իմ հաւատարիմ չեթող զիս. և պարտիմ յաւելուլ, զի գութք նորա քան թէ պարտք ածէին զնա ընդ իս. զի աքսորեալ իսկ եթէ էի 'ի սառնապատ մօայլ զարհուրելոյն Պերեզովայ, և յամայի միայնութիւն լճին Պայքալայ կամ Քամչեաքայ, անդր ևս գայր նա զհետ իմ. չգոյր ուրեք անապատ, չգոյր անձաւ վայրենի՝ ուր չգայր ընդ իս իմա Փեղորայ: Այո ամենեւին. ոչ ինչ երկբայիմ, զի վասն առաքինութեան նորա և աղնուական նուիրման անձին 'ի սէր իմ, մեղմագոյն տուաւ ինձ սքսոր: Եթէ քաղցրացան ինձ երբէք կեանք իմ, դատրիկ

սիրելի, մօր քում զայնմանէ գտանիմ շնորհապարտ. իսկ որ ինչ դառնութիւն եղև ինձ կրել, ևս ինքն ամենայնի գտանիմ պարտաւոր: Յայնժամ Նիսաբեթ ասէ. Այլ միշտ, հայր իմ, սիրեցեր դու զնա: Եւ 'ի բանից աստի ծանեաւ հայր նորա զսիրտ հարսինն 'ի դստեր իւրում, և գիտաց զի կարէր և նա չլինել թշուառ ընդ առն տառապելոյ: Եւ տուեալ նմա զգիր պատանոյն Սմոլոֆի, զոր ունէին առ իւր յերկէ, ասէ. Դուստր իմ, եթէ յաւուր միում լիցի ինձ գոլ արիութեան քում շնորհապարտ, բարեաց՝ որոց վասն քո և եթ ցանկամ 'ի վայելս անդ բարեբաստութեան՝ զիրս այս յիշեցուցէ մեզ զբարերար մեր: Պարտի Նիսաբեթ գոհացող լինել. խնամութիւն առաքինութեան փառաւորէ զազգ թագաւորաց, Շիկնեցաւ օրիորդն, և ընկալեալ 'ի ձեռանէ հօր իւրոյ զգիրն՝ մերձեցոյց 'ի սիրտ իւր, ասելով. Յիշատակ այնորիկ՝ որ ելացն ընդ քեզ, որ սիրեացն զքեզ, որ ծառայեացն քեզ, մի երբէք անկցի 'ի սրտէ աստի:

Կը շարունակուշի.

ՀՈՌՎՄԷՍԿՍՆ ԳԵՐԻՓ

Ինչպէս յունական ամեն հին ժողովուրդներ, նոյնպէս և Հռովմայեցիք ունէին իրենց գերիները, գերեալք՝ ի պատերազմի: Բայց ոչ թէ միայն պատերազմն էր պատճառ գերութեան, այլ նոյնպիսի պատժով կը պատժէր Հռովմէական օրէնքն և զդասալիքս, զմատնիչս և զապօտամբս:

Իսկ գերեաց նկատմամբ զրուած օրէնքներն ասոնք էին.

« Գերին ոչ թէ անձն, այլ իր մ'է:

« Գերին չի կրնար ստանալ, վասն զի ինքն է ստացուած այլոց:

« Ամեն քաղաքական պաշտամանց մէջ, գերին իբրև ոչինչ է համարուած:

« Իր վկայութիւնն դատաստանաց մէջ ամենեւին չի զօրեւր, և ոչ զոք կըրնայ 'ի դատ կոչել:

« Գերին չի կրնար կտակադրել. այլ իր տէրն է իրեն օրինաւոր ժառանգը »:

Հռովմայ մէջ թոյլ տրուած էր գերեաց ամեն տեսակ արուեստ ընել.

ինչպէս զբժշկութիւն, ճարտարապետութիւն, երաժշտութիւն և նօտարութիւն. բայց ամենն 'ի հաշիւ և յօգուտ իրենց տերանցը. անոր համար գրեթէ ամեն հաշուեսեղան ու կրպակ դարձունողներն գերիններն էին: Մեծատուն քաղաքացեաց գերիններն իրենց տիրոջ տանը մէջ կ'աշխատէին, և ամեն տեսակ արուեստից առանձին արուեստանոց մ'ունէին, և կոչէին զայն *ergastulum*, և իրենց աշխատանայ արդիւնքն կը վաճառուէր 'ի շահ իրենց տիրոջը: Կային և մէկ քանի մեծատունք որոց ունեցած գերեաց բաղմութիւնն այնպիսի էր, որ մասնաւոր ցուցակ մ'ունէին անոնց անուանցը: Կը պատմէ Պլինիոս թէ Կլաւդիոս Իսիդորոս անուամբ մէկը ծանոյց կտակաւ, թէ քաղաքական պատերազմաց պատճառաւ մեծամեծ կորուստներ ընելով, կը թողու միայն 4,116 գերի, 3,600 զոյգ եզն, 250,000 օղիս և այծիս և 600 միլիոն սեստերս:

Թէ որ մէկը ուզենար իր գերին ծախել, *catasta* անուամբ տեսակ մը արկղի մէջ դրած մերկամարմին՝ վաճառանոց կը տանէր, որպէս զի դնողն կարենայ մանրամասն քննել զգերին: Եւ ետքը շինուածապետք օրէնք մը դրին, որ երբ որ տեսաք գերի մ'ի վաճառ կը տանին, անոնց պարանոցէն ծանուցագիր մը կախեն, գրելով վրան գերոյն բարի և անբարի յատկութիւնքը:

Կը նշանակէ Պլինիոս իրեն ժամանակը մեծաւ գնով վաճառուած գերեաց շատ մը օրինակներ, որոց մէջ մասնաւոր յիշատակութեան արժանի է, կ'ըսէ, այն գրամատիկոս քերականը՝ որ երկու հարիւր հազար սեստերտի ծախուեցաւ: Բայց աւելի ետքը սակագիր մը հաստատուեցաւ, որով որոշուեցաւ իւրաքանչիւր գերեաց գինն՝ ըստ հասակին և ըստ արուեստին:

Բայց զանազանութիւն մը կար գիւղական գերեաց ու քաղաքային կամ ընտանեկան գերեաց մէջ: Առաջինք, որոնք այլ և այլ անուամբ կը կոչուէին ըստ աստիճանաց և ըստ վիճակաց, ինչ-

պէս *coloni*, *tributarii*, *originarii*, փոխանակ իրենց տերանց քով աշխատելու, կը զրկուէին որ դաշտերը աշխատին:

Գերեաց միաւորութիւնք նախ նուիրական չէին ըլլար ամուսնութեամբ, և երկրորդ պէտք էր որ իրենց տերանց ուղած աղջկան հետ կարգուէին. և ամենևին իրաւունք չունէին իրենց զաւակաց վերայ, որոնք իրենց պէս ստացուածք կ'ըլլային տերանց:

Գիւղական գերինները կը զգենուին ամառը կարճ պարեգօտ մը, և ձմեռը կը տրուէր իրենց հին տառատուկ մը, որպէս զի կարենան աշխատիլ դաշտաց մէջ, նաև սաստիկ ցրտոյ և օդոյ անհարթութեանց ժամանակ: Թէպէտ խեղճ ու տաժանելի էր գիւղական գերեաց վիճակը, բայց տաժանեգոյն ևս էր քաղաքայնոցը, վասն զի նշաւակ էին անդադար իրենց տերանց հաճոյիցը ու կրիցը: Ծանօթ է Պոլլիոնի դէպքը, որ ամանի մը կոտորուելուն համար, իր մէկ գերին ձկնարանին մէջ նետել տուաւ, որպէս զի ճարակ ըլլայ միւռնէս ձկանց: Եղկելին փախչելով աւազանէն, գնաց ընկաւ Աւգոստեայ ոտքը, որ ընթերեաց հետ էր տիրոջը հետ: Բայց ասիկա ոչ թէ ապրանաց միջոց մ'էր, այլ որպէս զի կարենայ թախանձանօք ուրիշ տեսակ մահուամբ մեռնիլ: Նոյն իսկ Աւգոստոս իր մէկ գերին լորամար, զի մ'ուտելուն համար, կախել տուաւ օր մը իր նաւուն կայմէն:

Ամենայն փոքրիկ յանցանք մը այս խեղճերուն համար տանջանաց ու անարգութեանն պատճառ մ'էր. որոց համար հարիւր խարազան կը զարնէին, և ոտքերնէն ծանր բաներ անցուցած կը կախէին: Երկար հացկերութից ատեն, յորում երբեմն ամբողջ գիշերն իսկ կ'անցունէին, պէտք էր այսինչ թուով գերիք առջնին կենային ծունկի վրայ լուծեամբ, և ոչ չրթունք. նին օրէն էր շարժել նոցա. հազի ձայն, փռնչիւն և հեկեկանք մը 'ի յանցանս համարեալ էր: Եւ երբեմն գերիններն կը կռուեցնէին խնջոյից սրահին

մէջ, կրկիսական խաղուց գաղափար մը տալու համար կոչնականաց: Սովորութիւն էր դարձեալ ունել սեղանոյ վրայ միմոսներ, խեղկատակներ, և սրագլուխ ու երկայնունկն թղուկներ, զորս կ'անուանէին *distorti, mariones*. որոնք մեծաւ մասամբ գերեաց տղաքներն էին, որոց մարմնոյ աճումը կամաւ կ'արգելուին, որպէս զի հրէշաձև կերպարան մ'առնելով իրենց զուարճութեանն իւր ըլլան, ինչպէս պատմէ մեզ Սենեկա:

Դռնապահ գերիներն գիշերները շրջթայով կը կապէին տանը դրան քով, որոց կերակուրն ու բնակութիւնն չէր տարբերէր պահապան շանց կերակրէն ու բնակութենէն: Եւ թէ որ գերի մը անբուժելի կերպով հիւանդանար, Տիբերի վրայ պղտի կղզի մը կը տանէին, ուր երեսէ ձգուած կը մեռնէին:

Գերեաց տրուած տանջանքներն, մարդ չի կրնար լսել ու կարդալ և չսուկալ: Ըստ հաճոյից իրենց տերանցը գաւազանով կը ծեծուէին մինչև ցմահ, բարձր աշտարակէ վար կը նետուէին, կը խաչուէին կամ գազանաց առջև կը նետուէին, և սովամահ կը մեռնէին: Կայսերքն Կլաւդիոս, Ադրիանոս և այլք, ջանացին գերեաց վիճակը բարւոքելու համար մեղմ օրէնքներ սահմանել. բայց ջանքերնին անօգուտ եղաւ, վասն զի դժուարին էր այսպիսի հնացեալ սովորութիւն մը արմատախիլ ընել: Պէտք էր առ այս քրիստոնէութեան զօրաւոր բարոյական զօրութիւնն, որ վերուց գերութիւնը, և ազատութիւն քարոզեց: Եւ ասիկա քրիստոնէական կրօնից արդիւնք ըլլալն և անտի իսկ յայտ է, որ նախ այն երկիրներէն ու ժողովրդոց մէջէն վերցաւ այս բարբարոսական սովորութիւնը, ուր նախ քրիստոնէութեան գեղեցիկ լոյսը ծագեցաւ. ինչպէս 'ի Հռովմ', յԱրևելս և 'ի Յունաստան. վասն զի կային մինչև մեր օրերը և կան տակաւին այնպիսի երկիրներ, ուր աւետարանին աշխարհօգուտ վարդապետութիւնն տարածուած չըլլալով, կը շարունակեն տակաւին գերեվաճառութեան սովորութիւնը:

ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍԳ ԿԱՏՈՆԻ ՀԱՄԱՐԱԿԱԼԻ. — Հռովմայեցիք երբ կը պնդէին անգամ մը ժամանակէն դուրս որ ցորեան բաշխուի ժողովրդեան, Կատոն չըջնէր ուղելով անոնց կամքը, այսպէս սկսաւ իր ճառը. «Քաղաքացիք, դժուարին է բան հասկըցնել ուռուցեալ տիկի՝ որ ականջ չունի»:

— Ուրիշ անգամ մ'ալ Հռովմայեցիները ոչխարի կը նմանցնէր, որոց իւրաքանչիւրն առանձին մտածելով, կ'ըսէր, ոչ թէ հովուին, այլ իրենց առջևէն գնացող ոչխարին կը հնազանդին: «Նոյնպէս և դուք Հռովմայեցիք, երբոր մէկտեղ էք՝ կը հետեիք մարդու մը, բայց թէ որ առանձին մնաք, չէք ուղեր մտիկ ընել նոյն մարդուն խորհրդոցը»:

— Կանանց չափազանց իշխանութեան դէմ խօսած ճառին մէջ կ'ըսէ. «Ամենայն մարդ կը կառավարէ զկին. մենք կը կառավարենք զամենայն մարդ, և մեր կանայքն ալ զմեզ կը կառավարեն»:

— Անգամ մը տեսնելով մարդ մը որ կը ծախէր իր հօրենական ստացուածքները, մերձ 'ի ծով, ըսաւ. «Այս մարդը ծովէն աւելի զօրաւոր է. վասն զի այն բանն որ ծովը կամաց կամաց ու դժուարաւ կը մաշէ, սա վայրկեանի մը մէջ կլլեց»:

— Փափկասէր մարդուն մէկը ուղեց բարեկամութիւն կապել Կատոնի հետ. սա մերժեց զնա ասելով. «Չեմ գիտեր ինչպէս ապրելու է այնպիսի մարդու հետ, որուն ապարանքը սրտէն աւելի զգայուն է»:

— «Բարեկամ, ըսաւ Կատոն օր մը եղծաբարոյ ծերու մը, ծերութիւնը ունի արդէն շատ թերութիւններ, հարկ չէ որ նորանոր ախտեր վրան յաւելուս»:

— Անառակ մարդուն մէկը թշնամանելով օր մը զԿատոն, Կատոն ալ պատասխանեց. «Բարեկամ, պատերազմը շատ անհաւասար է մէջերնիս. ինչու որ դուն կը լսես միշտ անմիտ ու անհանճար խօսքեր, և զայնպիսիս ալ ախորժանօք կը խօսիս. իսկ ես տհաճութեամբ կը լսեմ, և ոչ ալ սովորութիւն ունիմ խօսել զայնպիսիս»:

— Կատոն պատերազմական յաղթութենէ մը ետքը բոլոր աւարին մէջէն կերածէն ու խմածէն զատ ուրիշ բան չառնելով, կ'ըսէր. «Չեմ ուղեր նմանիլ այնպիսեաց, որոնք յաղթութիւնը իբրեւ միջոց կը գործածեն հարստանալու. այլ կ'ախորժիմ աւելի մրցիլ առաքինութեամբ լաւ որերոյ հետ՝ քան հարստութեամբ մեծատանց, ու անյադութեամբ ազահներու հետ»:

— Կը պատմեն դարձեալ, որ այս խօսքս ալ ըսած ըլլայ Կատոն, թէ՛ «Շատ աւելի